կաթուղիկոսութեան և Պատրիարքութեան Երուսաղէմի, եհաս անդ Մարտիրոս վարդապետ թագաւորական հրամանաւ, եւ 'ի բաց վարեալ անտի զեղիազար, կալաւ զՊատրիարքութիւն տեղւոյն. և եղիազար դնացեալ նստաւ 'ի Ռեմլէ առ ժամանակ մի, և երրեմն յԱրղնի։

Եւ քանզի միաբանք Ս. Յակոբայ չէին հաւանք ընդ Մարտիրոս վարդապետ, և զի տակաւին կենդանի էր ծերունին Աստուածատուր, ծախեալ դրամս ինչ՝ ընկալան 'ի Դրանէ հրամանն վասն Պատրիարքութեան նորա։ և յայնժամ Մարտիրոս կարդեցաւ իբր փոխանորդ նորա։ Տեսեալ ժողովրդոց զայսպիսի անզգամութիւն և զվնասակար գործս եկեղեցականաց ոմանց՝ և զցաւալի վիճակ Աթոռոյն Երուսաղէմի՝ ժողովեալ ամենեցուն 'ի մի վայր, մատուցին գիր աղաչանաց առ Եպարքոսն 'ի բանակն Արքունի, բողոք բարձեալ զանիրաւութենէ ոմանց, որք առիթ եղեն անկարգութեան և վրդովման աթոռոյն Երուսաղէմի. զի Պատրիարգունք այնր աթոռոյ ցկեանս զահակալէին. եւ մինչչեւ էր վախճանեալ միոյն, չէր օրէն տալ այլում զիշխանութիւնն զայն։ Իսկ այժմ վարդապետք Պարսկաստանի և այլք ոմանք, ստութեամբ եւ խաբէյութեամբ հանեալ հրովարտակ յԱրքունուստ, դիմեն յԵրուսաղէմ եւ խրոխտան 'ի վերայ միաբանաց, թէ ահա ունիմք հրովարտակս և եմք իշխան և խնամակալ վանօրէից և եկեղեցեաց կալուածոց եւ ամենայն գոյից Երուսաղէմի։ Զի նախնիք մեր զկալուածս և զամենայն կարասիս եկեղեցեացն այնոցիկ, զորս տուեալ են յաւուրց անտի Արքային Սէլիմայ, են հայթայթանք պարենից աղքատաց։ Իսկ նոքա բռնութեամբ յափշտակեալ զայնս, վատնեն և կորուսանեն ըստ կամաց իւրեանց, և յանցանելն նոցա քան զչափ, ծանրանան տակոսաւոր պարտք 'ի վերայ աղքատաց։ Եւ նոցա եղեալ 'ի գրաւի զկալուածս եւ զկարասիս վանաց, խոյս տուեալ փախչին անտի, և պարտատէրք կալեալ զմիաբանս նեղութեամբ և տադնապաւ պահանջեն 'ի նոցանէ զդրամսն ցուցանելով զմուրհակսն կնքեալ կնքով վանաց, թէ դուք ունիք հատուցանել զայնս։ Եւ ապա աղերս արկեալ ինդրեն հրովարտակաւ բառնալ զանկարգութիւնն զայն. զի Պատրիարքունք Երուսաղէմի մի իշխեսցեն մնալ զձեռս